

## **5. Տիպարանություն**

### **Հաճախորդներին փակ ցիկլով վարկավորելու կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա**


#### **1) Սխեմայի նկարագիրը**

Այս տեսակի սխեմաների գործողության մեխանիզմը կայանում է նրանում, որ բանկը իր հաճախորդների համար ձևավորում է հաշիվների շրջանառության (այդ թվում՝ վարկային) պատմություն, որը հետագայում հաճախորդի կողմից կարող է օգտագործվել իր կողմից շրջանառող միջոցների օրինականության հավաստման նպատակով:

Մասնավորապես, բանկն իր որևէ հաճախորդին տրամադրում է վարկ (կամ՝ օվերդրաֆթ, հաշվի վարկավորում): Նշված վարկային միջոցները որոշակի կարճ ժամանակահատվածի ընթացքում (որպես կանոն՝ մեկ կամ մի քանի օրվա ընթացքում) բանկում սպասարկվող մի քանի այլ հաճախորդների հաջորդաբար փոխանցվելուց հետո նորից մուտքագրվում են վարկը ստացած հաճախորդի հաշվին և ուղղվում ստացված վարկի մարմանը:

Հատկանշական է այն հանգամանքը, որ փոխանցումների միջանկյալ օղակներում հայտնված հաճախորդների հաշիվների մնացորդները թե միջոցները մուտքագրելուց առաջ, թե միջոցները ելքագրելուց հետո, որպես կանոն, զրոյական են կամ չնչին մեծություն ունեն: Այսպիսով, տեղի է ունենում գործարքների շարք, որի արդյունքում, օրինակ, շրթայի մասնակից հաճախորդները կարող են պնդել (բանկից ստանալ հավաստում առ այն), որ իրենց հաշվին տվյալ օրվա դրությամբ, եղել է որոշակի մնացորդ, կամ՝ որ իրենց կողմից կատարվել են որոշակի վճարումներ որևէ պայմանագրի/պարտավորության կատարման դիմաց: Նմանատիպ գործարքները հաճախ կիրառվում են այսպես կոչված «ԱԱՀ-ի կառուսելի» սխեմայով փողերի լվացման դեպքում:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



- ա. Բանկն իր հաճախորդին տրամադրում է վարկ (կամ՝ օվերդրաֆթ, հաշվի վարկավորում),
- բ. Վարկային միջոցները որոշակի կարճ ժամանակահատվածի ընթացքում բանկում սպասարկվող մի քանի կազմակերպությունների հաջորդաբար փոխանցվելուց հետո նորից մուտքագրվում են վարկը ստացած կազմակերպության հաշվին,
- գ. Վարկառուի «հետ ստացած» միջոցներն ուղղվում են վարկի և դրանց գծով հաշվեգրված տոկոսագումարների մարմանը:

### 3) Եզրահանգում

Վերը նշված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա ֆինանսական հաստատության կողմից իրականացվող վարկավորման գործառնությունները, հատկապես՝ ոչ ռեզիդենտ (օֆշորային տարածքներում գրանցված) ընկերությունների մասով: